ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 07 հուլիսի 2020թ.

2020 թվականի հուլիսի 7-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 65-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումների նախագծի թեմայներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. «Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին»,
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 65-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»,
3. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:

Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ ***«Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին»որոշման նախագիծը*** մշակվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ (***Համայնքի ավագանին սույն***

օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.) և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (*Համայնքի ղեկավարը կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.)* կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի (*1. Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին:*): Լ. Պողոսյանը ներկայացրեց բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Որոշվեց՝

1. հավանություն տալ Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երկրորդ հարցի՝ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 65-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»* որոշման նախագծի վերաբերյալ աշխատակազմի քարտուղար Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ « «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի փետրվարի 13-ի ՀՕ-95-Ն օրենքի համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքում (այսուհետ՝ Օրենք) կատարվել են հետևյալ փոխոխությունները՝

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար.»:

Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 9-րդ կետի «և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝» բառերը փոխարինել «կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների

փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝» բառերով.

2) 1-ին մասի 9-րդ կետի «բ» ենթակետի «ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝» բառերը փոխարինել «օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝» բառերով:

Նշված փոփոխությունները հաշվի առնելով անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարելու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 65-Ն որոշման մեջ:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

Լ. Ավուշյանը նշեց, որ նորմատիվ որոշումը ուղարկվել է ՀՀ ԱՆ՝ փորձաքննության, և ստացված եզրակացության համապատասխան կատարվել են ուղղումներ:

Որոշվեց՝

2. հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 65-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երրորդ հարցի՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** նախագծի վերաբերյալ Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ այն կազմվել է համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ *նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը,* և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը: Նախագծով նախատեսվում է Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2020 թվականի աշխատողների

քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 76–Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված հավելված N 5-ը՝ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, շարադրել նոր խմբագրությամբ:

Համայնքի ղեկավարի առաջարկությունը կատարվել է ելնելով «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրենի 2020 թվականի հունիսի 29-ի՝ համայնքի բնակիչներին շտապ բժշկական օգնության ծառայությունների մատուցման որակի բարձրացման նպատակով 2020թ. հուլիսի 1-ից շտապ օգնության ծառայության «Բուժական բրիգադի» աշխատանքները «Բժշկական գծային բրիգադի» միջոցով կազմակերպելու մասին զեկուցագրից:

Որոշվեց՝

3. հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան